

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Ց Մ Ե Ծ Ա Ց

Կ Ա Ր Ն Ո Յ Ք Ա Ղ Ա Ք

Ի լայնածաւալ դաշտավայրի գաւառին Բարձր Հայոց, զոր չորս և հինգ ժամուց բացակայութեամբ չըջապատեն լերինք մեծամեծք և մանուկք, 'ի հարաւ կուսէ՝ 'ի կողմն մի լերին կիսաժամաւ 'ի նմանէ տարակացեալ, ունի զնիստ իւր քաղաքս այս: Եւ է դաշտավայրդ հարթածաւալ և ամենայն գիւղօրէք գաւառին կարնոյ մեծաւ մասամբ երևեալք 'ի քաղաքէն, ծով իմն արդարեւ ցամաքային երևին քաղաքաւն հանդերձ, անարգել յամենայն բլրոց և բնաւ մերկ 'ի ծառոց:

ԲԵՐԴՆ ԵՒ ԱՐՈՒԱՐՁԱՆՆ. — Կրկնապարիսպ է բերդն մեծատարած և բազմաշտաբակ, և պարիսպքն ամենայն առ հասարակ ժայռաւորք: Միջոց կրկին պարբսպացդ, Հիւսար պիչէն կոչեցեալ, ուրեք լայն և ուրեք անձուկ, դատարկ է 'ի բընակչաց, առ դրամբքն և եթ կրպակս ունելով վաճառուց: Չարտաքին պարբսպաւն շուրջանակի իբրու քարնկէց մի և աւելի հեռագոյն՝ փոս փորեալ է մարդաչափ և կէս խորութեամբ՝ երկուստեք ամրացուցեալ որմովք մինչև ցբարձրութիւն գետնոյն արտաքնոյ, և քարաչէն կամուրջս ածեալ 'ի վերայ՝ անցանել 'ի բերդն, զորով պատեալ է ընդարձակ ճեմելեաց: Յանջրպետէ փոսին և այսր շուրջ դբերդաւն ողջոյն շուկայ է երևելի վաճառատեղեօք և արուարձան մեծ. և յաւարտ արուարձանին՝ և ուստի դաշտավայրն սկսանի, այլ փոս փորեալ է դարձեալ շուրջ վքաղաքաւն ողջոյն անորմ, զոր 'ի ժամանակս արշաւանացն Դահմազայ ասեն փորեալ. Ճեպիռ գապիռ ասացեալքն երկոտասան թուով՝ 'ի վերայ չըջապատութեան այդր փոսի են, ոմանց խլխլեալ և այլոց իսպառ անհետացեալ: Չափ չըջապատութեան փոսիդ, որ և շրջանակ քաղաքին ողջոյն, ժամու և կիսոյ հանդարտաքայլ ընթացիւք:

ՆԵՐՔՆԱԲԵՐԴՆ ԵՒ ԹԷՓՍԻ ՄԻԱՐԷ. — Ի հարաւային ծայր բերդին որ բլրածև բարձրացեալ է քան զամենայն վայրն՝ ներքնաբերդն է, ահեղ և բարձր պատուարաւ անջրպետեալ 'ի հիւսիսոյ և յարևմտից, որ անարգել դիտէ ընդ քաղաքն ողջոյն՝ վասն բարձրութեանն ներքին գետնոյն: Ներքնաբերդդ որոչեալ է 'ի զինարան պահպանութեան քաղաքին, գուցէ արդեօք նոյն և 'ի հնումն՝ իբրև պաշտածագոյն վայր վասն բարձրութեան դրիցն: — Թէպիսի միւնարէ ասացեալն, առ հարաւային որմով կանգնեալ, տեղոյն բարձրութեամբն համարձակ դիտէ մինչև ցմեծ հեռաստան, զի 'ի հնգից ժամուց հեռաւորութենէ նախ քան զնիստ տարածութեան քաղաքին սա երևի: Չունիմ որոչագոյնս ինչ ասել զամանէ. և չեմ հաւանեալ թէ միւնարէ իցէ մկկթի, որպէս ասէ ռամիկն, և քէպիսի կոչէ՝ զի տախտակամած է յարկն, ընդ որով ժամացոյց կայր մեծ և լսելի ընդ ամենայն

ԿԱՐՆՈՅ ՓԱԻԱՌ
1846

ԹՈՐԹՈՒՄ



ԽԱՂՏԻՔ

ՍՊԵՐ

ԴԵՐՉԱՆ

ԲԱՍԵՆ

ՄԱՆԱՆԱՂԻ



ԿԱՐՆՈՅ ԲԵՂԵԲ
38° 58' 8" Ե. Բարեկ


Փարանտարին

Էրզրու

քաղաքն, զոր Ռուսք 'ի բաց տարին: Իսկ զանգակատուն ասել ամենեկին վայրապար, զի արարացի տառիցն կիտուածք քիւֆի գրովք աներկբայ վկայ կան հագարացի շինութեանն: Գուցէ հաւանական ևս իցէ դիտարան ասել զնա, զի զայդ իսկ տայ կարծել բարձրութիւն տեղւոյն, ուստի դիւրագոյն էր համարձակ զննել զպէսպէս հանգամանս թշնամւոյն 'ի ժամանակս մարտից մինչև ցմեծ հեռաստան: Շինուած նորա աղիւսակերտ է և զլանած, և մօտ 'ի ծայրն է գրութիւնն աղիւսակողմամբ բարձաքանդակ դրուագեալ 'ի մի տող շուրջանակի, որ է մաղթանք բարեբաստութեան Մուզաֆէր պէկի թուին Սպիլ Գասիմայ՝ իշխողի քաղաքին յ'ժի դարու:

ՁԻՆԻԼԻ ՄԻՆԱՐԷ. — Արտաքոյ ներքնաբերդին 'ի կողմն Երզնկայ դրանն՝ յահեկէ նորին կայ այլ շինուած աշտարակաձև գեղեցկատես, յօրինեալ բազմագունի փայլուն յախճապակօք պտուտաձև բարձրաքանդակ վերուստ 'ի վայր: Անյայտ մնայ թէ զինչ էր և սա 'ի հնումն. զի կործանեալ գաղաթանն կամ թէ ցայն վայր հասուցեալ զշինուածն՝ ոչ մինարէի նմանի և ոչ զանգակատան:

ՁԻՑՏԷ ՄԻՆԱՐԷ. — Իսկ յարևելակողմն բերդին առ Դաւրէզի դրանն շինուած հոյակապ ընդ առաջ լինի Չիֆտէ միւնարէ կարդացեալ: Երկուստեք դրան շինուածոյն, որ բազմագրուագ յօրինեալն է շուրջանակի, հանդերձ պէսպէս զարդուք վիմափոր և բարձրաքանդակ՝ կան և անարուեստ պատկերք ձկանց 'ի վեր բերանաբացք, և առ նոքօք ոստ ծառոց: Մտեալ ընդ դուռն 'ի ներքս յերկուս առաջս անշատի շինուածն կամարակապ և կրկնայարկ, իւրաքանչիւր կողման ունելով կարգաւ սենեակս քսան, տասն 'ի վերնայարկին և նոյնչափ 'ի ստորև, և անձուկ գաւիթ զառաջեալ իւրաքանչիւր դասիկոնի կամարասիւն յօրինուածով: Ի ծայր սենեկացդ որ հանդիպակաց է դրանն առ 'ի ներքս, սենեակ մի կայ տաճարաձև բազմանկիւն բոլորաչէն չափաւոր տարածութեամբ, և գմբէթ նորա սրածայր աւարտեալ: Ներքին կողմն դորին առ հասարակ կճապատ դրուագեալ պէսպէս քանդակագործ զարդուք, գեղեցիկ և հոյակապ յոյժ. զդուռն նորա հանդերձ շրջանակօքն և ճակատան, որոց նոյնատեսակ քարամբք քանդակագործեալ էր յոյժ ճարտարարուեստ որպէս պատմեն ականատեսք, քակեալ թուանշանաւ Բապրէիչ զօրապետ առաքեաց 'ի Բեդրսպուրկ: Յատակ փառահեղ սենեկիդ գետնափոր է ամրակամար, որ արդ թափուր է յամենայնէ և մուտ նորա աւերեալ: Շինուածս այս ողջոյն կոչի և Ճէպիւսնէ, զի սենեակքն լցեալ են վառօդովք և այլ ևս կարևորք պատերազմի. նախ քան զգալ Ռուսաց կային անդ և վաղեմի զէնք՝ վահանք և սաղաւարտք: Բնակիչք քաղաքին սովորեցին զսա Չիֆտէ մինարէ ասել 'ի պատճառս կրկին մինարէից որ անընդմիջաբար երկուստեք դրանն 'ի ներքին կողմանէ 'ի վեր բարձրանան: Ըստ արհեստի ճարտարպետութեան շերտաձև յօրինեալ են դոքա վերուստ 'ի վայր 'ի կարմրագոյն և 'ի կանաչ աղիւսոյ. և չիք նոցա շէրիֆէ, այլ ըստ օրինակի առաջնոցն՝ մինչև անդր հասեալ դադարեալ է շինածն: Բարձրութեամբն հաւասար են միմեանց, այլ փայլուն տեսլեամբն մին առաւելու քան զմիւսն: Եւ աւանդեն ճարտարապետին նախ շինեալ զմին, և լաւագոյն այլոց դատեալ զմիւսն զոր աշակերտն արար, արկանէ ճարտարապետն զանձն 'ի վայր 'ի գաղաթանէ աշտարակին առ նախանձու և մեռանի. վշտացեալ աշակերտին ընդ մահ նորա, զնոյն



օրինակ մեռանի և ինքն: Ի բազմաց և այլուք ինքնահնար բանիւք մեկնաբանեալ Չիֆտէ մինարէ, իւրով պարսիկ արձանազրաւն ծանօթանայ թէ երբ և որոյ հրամանաւ շինեցաւ և յինչ պէտտ: Եւ այս թարգմանութիւն է արձանին.

Մասայք Աստուծոյ, ունկն դիր մը տաղրոտրեանք բանից իւնոց. Ի տիւն գերակարոտրեան Մէլիք խանի իջեալ Ի խորագնայ և եկեալ յերկիրս Յունաց, ղերտրեցի զտեղիս ինձ Ի բնակարիւն. և ամեալ զմտաւ շինել տեղի օժանդակի յիշատակ ինձ առ յապայ, կանգնեցի զմզկիրս զայս և զսկնակիրս Ի բնակարիւն գիտնոց և ուսումնասիրաց. և հաստատեցի Ի ծախս նորոգութեան շինուածոյն յաշերմանէ՝ զհասս եօրն կաշպակաց և զամենայն վայրացն որ շուրջ զշինուածոյն. զի սոցեկն անխախտն ար ըստ ամէ զհասս յանուն կաշուածոց սուրտան Մէլիք խանի: Եւ կացուցի ուսուցիչ վարժարանին ըզյաւն և զիմաստուն և զընտիր այր Ֆեխաւեւտիւն, կարգեալ նմա տնայիկ երիս գեօղս, տայ նմա ամի ամի երեք հազար և հինգհարիւր փող, զի աղօրս արասցէ վասն տիկնոջս: Արդ որ յայսմ հետէ խնամ տանի շինութեան և պահպանութեան տեղոյս, օրհնեալ եղիցի յԱստուծոյ. և որ զսա աշերեացէ՝ անիծեալ եղիցի Ի նմանէ: Եղև շինութիւն սուրս յերեքհարիւր յիսուն և միսուն բուսկանի հիւրեքիս:

Արդ յայտ է յարձանազրէդ զի ուսումնարան էր շինուածն վասն կարգացողաց մալիմանաց, և քառասնեքին սենեակքն բնակարան նոցին, և փառազարդ սենեակն տաճարաձև անշուշտ յարկ շիրմի կամ տեղի աղօթից: Իսկ ժամանակ շինութեանն 962 թիւ Քրիստոսի (հիճրէթի 351):

Մի՛ ի մեծագոյն հնութեանց քաղաքիս համարելի է Ուլու ճամին մետ՛ ի Չիֆտէ մինարէ. ոչ այնքան յարուեստէ վսեմ ճարտարպետութեան երևելի եղեալ,

որքան մեծութեամբն . զի երկայնութիւն է նորա 50 մէդր, յարեւելից յարեւմուտս ,
 և 38 լայնութիւն . չիք 'ի նմա այլևայլութիւն ձևոյ կողման և կողման , այլ առ հա-
 սարակ կարգ ըստ կարգէ կամարք են ձգեալ , և հաշուին կամարասիւնքն 28 , և
 եօթն կարգ կամարաց : Ի միջնավայր յարկին էր գմբէթն , որ կործանեալ և արդ-
 փայտակերտ է . շինուածն ըստ բողոքին ցածագոյն է ամենեւին անհամեմատ տա-
 րածութեանն : Ի ռամկաց կարծի սա եկեղեցի լեալ 'ի հնուան , այլ ձև եկեղեցւոյ
 բնաւ չերևի 'ի շինուածի անդ , և ոչ տեղի խորանի . զի և յարտաքին կողման փո-
 փոխութիւն ինչ ոչ երևի նորոգութեան : Թերևս մատենադարան եղեալ իցէ
 կամ գիւանատուն առ Յունաց կայսերութեամբ , զոր Տաճկաց 'ի մզկիթ փո-
 խեալ զնշան միհրապին յաւելեալ են 'ի հարաւոյ , և թողեալ նմին դրուես եր-
 կու՝ այլքն որմեալ կան և տաճիկ արձանագիր 'ի վերայ միոյ 'ի դրանցն :

ԴՐՈՒՆՔ ԲԵՐԳԻՆ . — Չորս դրոււք են բերդին երկրացիկք , և ոչ հանդիպա-
 կաց միմեանց 'ի կրկին պարիսպսն , և կոչին Դէվրիզու դուռն , Երզնկայ դուռն ,
 Նոր դուռն և Կիւրճի դուռն , յորոց ոմանց վերայ են տաճիկ արձանագիրք . իսկ
 հին արձանագիր յունարէն կայ 'ի վերայ Կիւրճի դրանն ներքնապարսպին մանր
 և մեծատառ՝ յորմէ մասն անեղծ մնայ .

Ἦ Θεὲ . . .	Κύριε	Աճ . . .	Տր
Βοήθει . . .	τῷ	Օգնեա . . .	
Δούλῳ . . .	τῷ	Ծառայի . . .	
Εὐχλε . . .		Եւկլե . . .	
Τὸ βουρ		Վուր . . .	
Μηνυ		(Սմիս ?) . . .	
Ἔτει ζφ'.		Ի թուին 6500 .	

Թուականդ արարչութեան 6500 որ ըստ Յունաց հաշուի է 992 ամ ֆրիստոսի ,
 թերևս պատշաճիցի ներքոյ գրելում արձանի , որ է այս .

Κυριε βοηθη τον δουλον σου	Տէր օգնեա ծառայի քո
Ρωμανου τον θαλασινου ?	Ռոմանոսի (Դաւասինոն կամ Թշուառի ?)
και κατεπανον της ηβε(ρ)ιας . . .	Եւ կատեպանի (վրաց ?)

Յերի արձանիս կայ բարձրաբանդակ պատկեր նիզակաւոր հեծելոյ , և հրեշտակի
 և կուսի . և 'ի հանդիպոյ՝ ընձու :

Սակաւուք անդր քան
 զդուռնդ յահեկէ նորին 'ի
 նմին պարսպի իբր տասն
 ոտնաչափ բարձրութեամբ
 'ի գետնոյն՝ կայ և հայ արձա-
 նագիրդ աղարտեալ 'ի փո-
 քու քառակուսի վիմի . և

ԾՍ ԱԾ ՈՂՈՐ
 ՄԷ ՍՏԵՓԱ
 ՆՈՍԻ ԵԻ ՅՈՒ
 ՍԵՓ ԵՐԻԿՈ

այդ տապանագիր թուե-
 ցաւ ինձ ասեալ 'ի գերեզ-
 մանատանց և մուծեալ այդր
 'ի ժամանակս նորոգու-
 թեանց . զի անչքութիւն վի-
 մին և դրուածոյն և տեղոյն
 անպատկանութիւն չներէ

ասել եթէ յիշատակարան իցէ շինողին կամ ճարտարապետի պարսպացն : Չնոյն
 ասեմ և զբանդակագործ խաչիցն որովք առաւել քան յայլ տեղիս լի է մասն

պարսպիդ՝ որ ընդ մէջ կիւրճի դրանն և հայ արձանագրիդ . զի ոչ կարգ 'ի շարս նոցին երևի , և ոչ տեղոյն յարմարութիւն . այլ խառն 'ի խուռն և անշուք : Յայտ իսկ է զի 'ի վեցերորդ դարէ մինչև ցերեքտասաներորդն բազում անցք անցին ընդ քաղաքս այս 'ի Պարսից 'ի Յունաց , 'ի Թուրքաց , 'ի Վրաց , 'ի Թաթարաց . յորոց հարկ էր խարխալել պարսպաց նորին՝ և նորոգել : Այս միայն յերկբայս արկանէ զհետաքնին միտս , զի 'ի հարաւակողմն արուարձանին արտաքոյ կանգուն կայ տակաւին մասն ինչ հին պարսպի հանդերձ դրամբ , թէ արդեօք նախ քան զթէոդոս բնակութիւն կալեալ է անդէն մարդկան , եթէ մասն իցէ դա որ 'ի նմանէն հիմն արկաւ , կամ թէ հարաւային կողմն բերդին մինչև ցանդր հասանէր նախ և ապա զատուցեալ 'ի միջնարբերդէն և անդր՝ յամայութեան մնաց մասն պարսպիդ , կալցի զայս որպէս ոք ախորժէ . մեք այլոց ևս տեղեաց քաղաքին ելցուք 'ի տես :

ԹԻԻՐՊԷՔ ՍՐԱՅԱՅՐԻ . ՄԶԿԻԹԻ ԵՒ ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱՅ ՇԻՆՈՒՄԻՔ¹ . — Ի մէջ բերդին և մանաւանդ յարուարձանին 'ի գերեզմանատունս Տաճկաց և 'ի մէջ թաղիցն ևս տասնիւ չափ կան շիրիմք Տաճկաց . յորոց երկուք կոչին կիռմիշլիշ գիռմիպէք արտաքոյ արուարձանին : Առ հասարակ քարաշէն են շիրիմք և սրածայր դմբէթիւ . ոմանք բոլորչի և այլք բազմանկիւնի և միով դրամբ , մի կամ երկու պատուհան ունելով շուրջանակի , կամ ոչ բնաւ . մեծութեամբ իբրու 'ի չափ միջակ սենեկի , և միհրապ 'ի հարաւոյ , և յատակք նոցա գետնափորք . հոյակապ է որ կայն 'ի գերեզմանատան Եէնի մահալլէին , և դադաղաձև գերեզմանք 'ի նման երկու : Ի միումն 'ի նոցանէ որ 'ի մէջ թաղին է յարուարձանին՝ կայ հին արձանագիր քիւֆի գրովք : — Ի բազմաթիւ մզկիթս նշանաւորքն են լալէ փալա՝ 'ի բերդին , հանդէպ պալատան փաշային , Գոշրշուշու ճամի , յորում տեղոջ եկեղեցի էր յառաջն յանուն սրբոյն Ստեփանոսի , Ճափարիէ , Մոշրաւտ փալա , Այազ փալա , կիշ Սիմեոն : — Ի կարգի հոյակապ հնութեանց համարելի է և Գաշխասն բազմագմբէթ . որ արդ ամբարանոց է փայտի : Սպասի պազար հանդէպ պալատան փաշային 'ի բերդին , ողջոյն փողոց մի կամարայարկ , և կրպակքն երկուստեք քարակերպք :

ԵԿԵՂԵՑԻՔ . — Առաջինն յեկեղեցիս կարնոյ Հայոցն է Աստուածասիւն կոչեցեալ , նորաշէն և լայնանիստ որ և մեծութեամբն զանցանէ զբազում եկեղեցեօք արևելից . կառուցեալ 'ի նմին տեղոջ յորում յառաջագոյն էին երկու եկեղեցիք առնթեր միմեանց : Երեք դրուկք են նորին , առաջին յարևմտից քառակուսի պատշգամբ ունելով զառաջեաւ յարկածածուկ , և այլք 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ : Որմունքն առ հասարակ 'ի կարմրագոյն սրբատաշ վիմաց , քսան սեամբք . յարկն հինգկարգեան աղիւսակերտ կամարօք : Թէպէտ և ահեղ է մեծութեամբ եկեղեցիս , այլ մերկ յարհեստէ վսեմ ճարտարպետութեան . մանաւանդ զի և ձեղունն ցած է , և երեքին խորանքն ևս ցածագոյնք անհամեմատք մեծութեան եկեղեցւոյն , անձուկ է և բեմն : Է նորա և ամալիոն յորմն հարաւոյ , փայտաշէն և ոսկեզօծ : Գեղեցիկ է յոյժ վերնատունն կանանց , յոր ծախեալ թուի ճարտարապետին զամենայն ճարտարութիւն իւր : Արտաքոյ եկեղեցւոյն 'ի հարաւոյ որմնակից է հնաշէն մատուռն քարակերտ և կամարակապ , մնացորդ

¹ Յորոց շատք կործանեալք և կիսաւերք կամ այլափոխեալք են յետ մեծի սասանութեան քաղաքին եղելոյ յամին 1859 :

հնոյ եկեղեցւոյն , զոր և տաճար կոչեն . և սա այն է յորում լեալ է միաբանութիւն ազգիս ընդ Յունաց առ Եզրիւ կաթողիկոսիւ . դռնափակ է տեղին իբրև նուիրական , և բանի յուխտ եկելոցն : Ի հիւսիսակողմն եկեղեցւոյն է դերեզմանատուն ընդարձակ յոյժ , այլ մերկ իսպառ 'ի շիրմաց . զի զամենայն քարինսն 'ի շինուած եկեղեցւոյն ծախեցին : — Երկրորդ եկեղեցին նոյնանուն կաթողիկացն է՝ կիսով չափ փոքր քան զմիւսն և անսին և փայտայարկ . որմունքն նոյնօրինակ 'ի կարմրագոյն քարանց , և դրունքն երեք . իսկ կանանց վերնատունն արտաքոյ է բուն որմոյ եկեղեցւոյն 'ի վերայ որմնագործ կամարասեանց . որով դաւիթ է ձևացեալ առաջի աւագ դրանն ընդ ամենայն երկայնութիւն արեւմտակողման որմոյն : Երեք խորանք են նորա , և բոլորաչէն աւանդատունք կրկին ընդ հիւսիս և ընդ հարաւ : Եկեղեցիս այս շինեցաւ արդեամբք Աբրահամ ամիրայի Ալլահվէրտեան , որոյ արձանագիր յիշատակին է 'ի ճակատ աւագ խորանին : — Երրորդ եկեղեցին է Յունաց՝ փոքր՝ առաք Գեորգ կոչեցեալ :

ՈՒՅՏԱՏԵՂԻ . — Ըստ քրիստոսական կրօնիցս պարծի կարնոյ քաղաք հանգստարան լինելով սուրբ մարտիրոսացն Սահակայ և Յովսեփայ . տեղի նահատակուկութեան նոցա արտաքոյ է բերդին մօտ 'ի Դէվրիզու դուռն 'ի տուն Տաճկի ուրուք . յորում առ որմով խցկան բխէ ջուր ցուրտ 'ի քարանց . խրամատեալ է որմն ըստ բաւականի մտանելոյ , և գնացեալ քայլս երիս 'ի ներքս կոյս՝ յաջ կոյս խոտորի խրամն , ուր երեւի բխումն ջուրցն 'ի քարանց ծորեալ կաթիլ առ կաթիլ , և ժողովի յաւազանն փոքրիկ որ զառաջեալ որմոյն , յորմէ ըմպեն ուխտաւորքն : Զուրդ այդ հաւաքի յաղբիւրն որ առ ոտիւք կամրջին է և հանէ 'ի Դէվրիզու դուռն : Սակայն հանգստարան մարմնոց սրբոցս է 'ի բերդին մերձ յ'Ուլու ճամին , 'ի ծայր փոքր և անել փողոցի 'ի քարակերտ և կամարաչէն խցկան ուրեք . յորում 'ի քարեղէն բարձրաւանդակի կան երկու դագաղաձև քնարանք առնութեւր միմեանց , այլ մարմինքն թաղեալ 'ի խորս գետնոյն . տեղին 'ի ձեռս Տաճկաց է և ախեալ , սակայն համարձակ մտանելի է ամենայն ուխտաւորաց : Ի ներքս և արտաքոյ կան և այլ շիրիմք Տաճկաց : — Այլ մատուռ է 'ի շուկայն առաք թորոս ասացեալ , և առաք Միւնա՝ շիրիմ և եթ որորաձև և խաչաքար 'ի սնարից առ տաճարաւ եկեղեցւոյն Հայոց . զորոց չունիմ ասել վասն հաւատոյ սպանեալ արդեօք 'ի Հագարացոց . զի ոչ գրաւոր աւանդութիւնք են ուրեք և ոչ հաւաստի բանք :

ԹԻՒ ՀԱՅԱՔԻՅԱՅ . — Մինչ չև մտեալ Ռուսաց 'ի քաղաքս յայս , տունք ամենայն հայազգեաց հաշուէին իբր չորս հազար . այլ գաղթեալ նոցա առ հասարակ 'ի կողմանս վրաստանի , և դարձ արարեալ ոմն փախստեամբ և ոմն հրամանաւ , արդ լինին տունք իբրու հազար մի :